ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Տեսնուցման տողը սառ գիծ երեսին համար 40 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse W. 4. (Autriche) Vienne

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքի)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք ետ չեն տրուիր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ՍԱՍՆՈՅ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

—)o(—

Պ. Հ. Դ-եան ապրիլ 30-ին Պոլսէն կը հաղորդեն թէ՝ Բիթլիսի և Մուշի հայ առաջնորդները, որոնք վալիի հետ զացած էին Անդրանիկը համոզելու որ անձնատուր ըլլայ, չը յաջողելով իրենց բանակցութեան մէջ՝ հեռագրով հրաժարական տուած են իրենց պաշտօնէն. սակայն Պատրիարքը այդ վայրերու խառն կացութիւնը աչքի առջեւ ունենալով՝ ընդունած չէ հրաժարականներն։

— Բիթլիսի Անգլիական հիւպատոսը հրաման ստացած է Մուշ երթալ տեղեկութիւններ քաղելու նպատակով։

Զանազան դեսպաններ ամենաբարեկամական ձեւով խորհուրդ տուած են Բ. Դրան որ հայկական հրոսախմբերու շարժումները մաքրած պահուն, խուսափէ և խստիւ արգիլէ քիւրտերուն և զօրքերուն որ ժողովրդին վրայ բռնութիւն չը գործադրուի, որովհետեւ այդ բռնութիւնները միջոց պիտի տան հայ յեղափոխական կազմակերպութիւններուն իրենց բրօբագանդը աւելի եռանդուն կերպով տանելու։

— Մայիս մէկին Պոլսէն կը հեռագրեն հետեւեալը.

Հայաստանէն եկած տեղեկութիւններուն համեմատ Անդրանիկը, հայ հրոսախմբերու առաջնորդը, մերժած է անձնատուր ըլլալ, չը նայելով որ անոր մէկ խումբը ոչնչացած է Վանի քովերը, ինչպէս և ուրիշ 12 հոգէէ կազմուած խումբ մը։

— Կ. Պոլսէն մայիս 12 թուականաւ կը հեռագրեն Նոյէ-Ֆրայ-Պրէսսէ-ին.

«Խումբերու առաջնորդող Անդրանիկ ինչպէս ասկէ առաջ հիմա ալ կը մերժէ զէնքը վար դնել, որովհետեւ նա հաւատացած է թէ այդ պարագային բոլոր խումբերը պիտի ջնջուին։ Կըսուի թէ իր ծառայութեան մէջ կը գտնուին ռուսական հին սպաներ»։

Այս տեղեկութիւններէն կարելի է երկու մխիթարական կէտ նկատել։ Առաջինը որ քաջ Անդրանիկը՝ իր խօսքի վրա հաստատ մնալով, անձնատուր չէ լինում. իսկ երկրորդը՝ որ թուրք կառավարութիւնը եւրոպական պետութիւնների ճնշման տակ, իրապես մինչեւ օրս խուսափել է իր վայրենի ձգտումներին ուղած ձեւովը բաւարարութիւն տալ։

Մենք արդէն առաջուց չեշտել էինք, թէ ոչ Դաշնակցութիւնը, ոչ Անդրանիկը և ոչ էլ Սասունցիք տրամադրութիւն ունէին ապստամբութեան դիմելու այս տարի, այլ պարտաւորվեցին ինք նպաշտպանողական դիմադրութեան դիմել թուրք կառավարութեան Սասունի վերաբերեալ ծրագիրների իրագործման արգելք հանդիսանալու համար։ Անդրանիկի բռնած դիրքը, ինչպէս և Սասունցիներինը ապացուցանում է մեր նախօրօք ասածների ճշմարտութիւնը. և մեր քաջարի հրոսապետի այդ խելացի դիրքն է որ այսօր թուրք կառավարութեան ստիպում է անսալ եւրոպական պետութիւնների խորհրդներին և ճնշման գործի մէջ չափ ու սահմանից դուրս չգալ։

Անդրանիկի արտակարգ խրոխտութիւնը ներկայ ծանր պարագաներում մի մխիթարական իրողութեան դոյութիւն ունենալն էլ է փաստում։

Ահա թէ ինչ իրողութիւն. Անդրանիկ բացի անձնատուր չը լինելուց և չէ հեռանում վտանգված վայրերից, որից և գուշակել կարելի է թէ՝ նա իր շուրջը և վտանգված վայրերում կուտոյ ուժեր ունի կազմ ու պատրաստ, որոնց կաւի դաշտ պէտք է մղէ, եթէ թուրք զօրքերը յանդգնեն Սասունի ժողովրդի հետ վարվելու այնպէս, ինչպէս վարվել են 94 թուականին։

Ուրեմն շնորհիւ Անդրանիկի, որ բացարձակօրէն Դաշնակցական է, հակառակ «Հայաթերթ» կոչված փալասի երկդիմի յայտարարութեան, և շնորհիւ միւս վարիչ դաշնակցական ընկերների գովելի տաքտին այսօր Հայաստանի մէջ դեռ տեղի չեն ունեցել այն չար գուշակութիւնները, որ գուժում էին և դեռ գուժում են զանազան ստոր տիպեր. ու յուսով ենք որ տեղի էլ չը պէտք է ունենան, եթէ Հայ Յեղ. Դաշնակցութեան Եւրոպայի մարմինները, ինչպէս յունվարի մէջ, այնպէս էլ ներկայ ամիսներում կարենան մեր եւրոպացի բարեկամների լաւ տրամադրութիւնները ժամանակին և լաւ կերպով գործածել դիւանագիտական շրջանակներին ի նպաստ մեզ գործածել տալու համար։

Այո, դաշնակցականներիս համար ներկայ ծանր պարագաներում մնում է միայն գործով և գործով զբաղվել. թէ երկրում և թէ Եւրոպայում։ Երկրում Անդրանիկներին դրական գործերով աջակից հանդիսանալ, Եւրոպայում դիւանագիտութիւնը ինը-պաստ ժողովրդի և ի նպաստ մեր դատին գործածել։

Մեզ համար այլեւս թող գոյութիւն չունենան զանազան վայրահաջները իրենց չար գուշակութիւններով. մենք շարունակենք մեր գործը առանց աջ ու ձախ նայելու, շարունակ պատրաստվելով հայկական մեծ փոթորիկը ստեղծելու համար, որը բացի թշնամուն սարսափեցնելուց եւ ընկճելուց, կը մաքրէ և այն աղգային աղտոտ հոսանքները, որոնց պահպանելու և ստեղծելու ճիգեր են թափում զանազան մանր մունր արարածներ, թագնված պէս պէս դիմակների տակ։

ՎԱՐԴՕ

ՊԱՊԸ ԵՒ ՖՐԱՆՍԱՅ

—)o(—

Դեռ Ֆրանսայի նախագահ Լուբէն Իտալիա չը գնացած, եւրոպական թերթերը լուր տարածեցին որ Պապը հակառակ է այդ այցելութեան, որովհետեւ Լուբէ Հռոմ գնալու համար Պապի համաձայնութիւնը չէր խնդրած։ Անշուշտ մեր ընթերցողներից շատ շատերը գիտեն որ Պապերը մինչեւ օրս դեռ իրենց Հռոմի և իր շրջականների քաղաքական տէրն էլ են համարում։

Լուբէի Հռոմ գնալուց յետոյ կրկին եւրոպական թերթերը հաղորդեցին որ Պապը պատրաստվում է բողոքագրեր ուղարկել եւրոպական պետութիւններին Լուբէի, իբր թէ, ապօրինի վարմունքի դէմ բողոքելու համար։

Եւ այդ այսօր իրողութիւն է. Պապը բողոքել է։ Վատիկանի լաւատեղեակ շրջանակները բացատրում են որ Պապը այդ քայլը արել է երկու նպատակով։ Առաջինը այն է, որ նա ուզում է նախազգուշացնել կաթոլիկ վեհապետներին, որոնք կուզէին Լուբէի օրինակին հետեւիլ, երկրորդը՝ որ դիւանագիտական շրջանակներում հաստատ համոզում գոյացնել տայ, թէ Սուրբ աթոռը դեռ հրաժարված չէ Հռոմի վրա քաղաքական իշխանութիւն ունենալու տրամադրութիւններից։

Նախ քան այդ բողոքագրերը ղրկելը, Պապը մտադիր էր աւելի վճռողական քայլ առնել, այսինքն իր Պարիզի պատերազմին ետ կանչել, որը նշանակում էր Ֆրանսայի հետ խզել իր դիւանագիտական յարաբերութիւնը. սակայն վախնալով թէ այդ քայլը պատճառ կը դառնայ որ Ֆրանսայի երեսփոխանական ժողովը ոչնչացնէ Պապերի հետ ունեցած համաձայնագիրը, այդ որոշումից հրաժարվեցաւ ու բողոքագրերը ղրկեց։

Եւրոպական թերթերը հաղորդում են թէ՝ Ֆրանսական, Ռուս և Անգլիական կառավարութիւնները մերժել են այդ բողոքագրերը ընդունել. իսկ թէ միւս կառավարութիւնները ինչ դիրք են բռնել, դեռ յայտնի չէ։

Պիոս X-ի այս յախուռն քայլը եւրոպական թերթերին ստիպում է համոզվել որ նա դիւանագիտական ընդունակութիւններից զուրկ է ինչպէս և իր քարտուղարը, մինչդեռ Լէօն ԺԳ. Պապը և իր խորհրդական Կարտինալ Ռամպօլան իրենց քայլերի և պահանջների մէջ աւելի չափաւոր, տաքտով ու ժամանակի պահանջներին յարմարվող էին։

Ֆրանսական կառավարութիւնը արհամարհանքով մերժել է Պապի բողոքագիրը, որով Նրա կըռիւը հոգեւորականութեան դէմ

նոր շրջանի մէջ է մտնում։

Պապի բողոքագիրը աւելի պիտի զօրեղացնէ այն ատելութիւնը որ Ֆրանսայի արմատական տարրերը զգում են դէպի կաթոլիկ եկեղեցին և նրա հիմնարկութիւնները։

Ամենահաւանականն է որ այժմ վերջնականապէս որոշվի Համաձայնագիրը ոչնչացնել, որին ուշինչեւ այժմս իր բոլոր քայլերով դիմում էր Կոմբը՝ իր երկաթէ կամքով ու սֆինքսի պաղարիւնութեամբ։

Պապը իր վերջին քայլով Կոմբին և նրա գաղափարակիցներին չատ լաւ առիթ է տալիս վճռողական լինել դէպի պապականութիւնը և աշխատել օր առաջ եկեղեցին բաժանել կառավարութիւնից։

Ֆրանսական կառավարութեան վճռողական քայլը պապականութիւնը պէտք է զրկէ ամենամեծ կաթոլիկ ցեղի աջակցութիւնից, և այնուհետեւ, ինչպէս երեւում է պապականութեան յոյսերն ու երազները ամենքն էլ օդը պէտք է ցնդեն։

Ու ժամանակ է։

ԴԻՄԱԿԱՒՈՐՆԵՐԸ

Մեր ազգային յեղափոխութեանը ծագում առած որէն ի վեր նոյնիսկ, գտնուեր են անհատներ յեղափոխական դիմակի տակ, որ՝ մոռնալով ամէն նուիրական պարտականութիւն, աշխատեր են յեղափոխութիւնը իրը միջոց մը գործածել միմիայն իրենց կաշիի պահպանմանը համար, ի հարկին ամէն ստորնութեան յանձնառու ելլալով։ Անոնց քաղաքականութիւնը թէեւ ժամանակաւոր է եղած, բայց միշտ համեմատական ազդեցութիւն է ունեցած գործին յետամնացութեանը վրայ։

Ինչպէս որ յայտնի է ամէն ատեն անկեղծ ոգւով կերառուած գործունէութիւն մը թէեւ չատ մը պատնէշներու է բաղխած, բայց միշտ ճըշմարտութեան զէնքն ի ձեռին կըրցած է կոխկռտել ամէն մի արգելք, և հասած իր նպատակակէտին։ Եւ զարմանալի չէ թէ խոշնդոտ եղող սերունդը միշտ գոյութիւն է ունեցեր և իր կարգին ըրեր է այն՝ ինչ որ իր նախորդները կտակած էին։

Այդ նողկալի գրութիւնը ներկայիս մէջ ալ գոյութիւն ունենալէ չէ դադրած. չնայելով քիչ թէ չատ մեր ազգի մեծագոյն մասը կրցած է զանազանել բարին ու չարը։

Այո, հիմակուանները չատ ցերազանց են իրենց նախորդներէն — ապականութեան տեսակէտով ասոնք իրենց նմանը չը տեսնուած ամենաղտոտ տիպերն են որ կը ալքատան մէյմէկ անկիւն և կաշխատին ամէն մի սրբութիւն պղծել, ամէն մի ճշմարտութիւն խեղաթիւրել, վերջապէս ամէն մի լաւ գործ կեղտոտել։ Այդ տեսակները ոչ Աստուծմէ կը վախնան և ոչ մարդոցմէ կամչնան. իրենց սկզբունքն է խաբել, զրպարտել, հայհոյել, դաւաճանել, ոտնակոխ ընել ամենավսեմ գաղափարներն ու գործերն իսկ։ Այս արդահատելի ուղղութիւնով է որ պիտի կրնան ժամանակաւոր կեանք մը ունենալ, կեանք մը որ անտանելի է դարձած նոյնիսկ իրենց համար. ասոնց յաւիտենականօրէն դատապարտուած են մխրճուած մնալ գարշութեանց մէջ. եթէ ուզեն իսկ մաքրագործուիլ, չեն կարող, այլեւս ծուծերնին է անցած ապականութիւնը։

Սկսուած գործը շարունակել պիտի նկրտեն թէեւ, բայց անողոք իրականութիւնը պիտի փչրէ զանոնք իր թաթերուն տակ և մի օր պիտ՝ փճանան — և այդ ժամանակը ուշ չէ— և իրենց ունեցած պժգալի արարքները յաւիտենական անէծքներով պիտի մկրտուին, և ապագայ պատմութիւնը պիտի դրոշմէ այսպիսիներու ճակտին նախատական սեւ կնիքը։

Զարմանալին հոն է որ կարգ մը միամիտներ ոլոնց ներսիդին անկեղծութիւնը գոյութիւն ունի կը հետեւին այսպիսի ստրկահոգիներու ուղղութեան ամէն փայլուն գործ սեւ տեսնելով և իրենց վրայ ունեցած զընահատելի յատկութիւնները չէզոքացնելով։

Մինչեւ ե՞րբ խաբուին այդ միամիտները. պիղծ բերաններէ դուրս պրծած քանի մը չողչողուն բառերէ. մինչեւ հիմա միթէ չկրցան ըմբռնել թէ՝ բառերով, թղթեր մրոտելով, երեւակայական գործունէութիւն ցոյց տալով որ եւ է օգտակարութիւն չընծայուիր ազգին։

Երբ ասոնք առանց նկատի առնելու չարունակեն պարզմտօրէն հետեւիլ այս տեսակ տիպերու, երբ չուզեն տեսնել իրողութիւնը իր պայծառութեամբ, երբ ապառաժի խառնուածքամբ հանդիսատեսի դեր կատարեն սթէ ինչ պիտի ելլայի ենթադրական փիլիսոփայութեամբ և վախնալով որ իրենց շահախնդիր պետերու քարոզած սկզբունքներուն դաւաճանած պիտի ելլան այն ատեն, իրենք ալ պիտի գրաւեն պատմութեան մէջ սեւ էջ մը։

Գալով մեր միութենական անժիր մեղուներու, պիծակներու և ժեղնեռու, ի՞նչ կը մտածեն արդեօք թամիր եղծներու լուրջ գործունէութեան(*) կսպասե՞ն որ աջակցին։

Եթէ անկեղծ մտածողներ էք. եթէ հայրենիքի շահը միայն նկատի կառնէք, եթէ դրական մարդիկ էք, նայեցէք Սասնոյ դրութեան վրայ որ լուրջ կերպարանք ստացած է. տաճիկ կառավարութիւնը մեծ ոյժեր կը թափէ ֆէտայիներու դէմ, անոնց ծարաւի գնդակներու կծուութիւնը մեներգելով։ Պատրիարք, եպիսկոպոս իրար կը խառնէ՝ մեծաւորներ կը ղրկէ, որպէս զի խաղաղեն. եւրոպական հիւպատոսները ազդու միջոցներու կը դիմեն։ (*) Երբ ասոնք կը տեսնէք, ալ անկից աւելի ի՞նչ լուրջ գործունէութեան կսպասէք։ Սասնոյ, Մշոյ, Վասպուրականի և ուրիշ տեղերու գրաւմանը կսպասէք ֆետայիներէն, և անկից վերջն է որ ձեռք պիտի կառկառէք. այն ատեն ձեր դրամին ալ ձեզի ձեր մարդն ալ։ ժամանակը հիմա է. ֆետայիները լեռներու բարձրունքը կանգնած, յաղթական դրօշը պարզած, առիւծի պէս օգնութիւն կը մռնչեն։ Ինչո՞ւ համար բառերու հետ կը խաղաք. ի՞նչու գրական ելալ չէք ուզեր և նետուիլ

(*) Ականջը խօսի Շէվկը էֆէնտիին. միթէ 80–100 յեղափոխականի գործեր են ասոնք։ Ց.

սապարէզ և մի միայն կը բաւականանաք տեսականին հետեւիլ գործնականէն խուսափելով։ Որո՞ւ կսպասէք այնտեղ կուսողները ամենքն ալ հայեն, ամենքն ալ միացած գործը յաջողով կը տանին, ամենքն ալ միեւնոյն գաղափարով ոգեորուած մարդիկներ են. անոնք արիւնի ծարաւի են, կուուել կը սիրեն. ոչ իսօքերը կը սիրեն և ոչ մրոտուած թուղթերուն կանսան. երբ կը մտանաք և կամ կուզէք մտանալ, ամենայն սիրով կընդունին ամէն գիւրութիւն ընծայելով։ Եթէ զոհողութեան ընդունակութիւն ունիք, հրամմեցէք։

Նոյնիսկ —բայց չատ քիչ բացառութեամբ— արտասահմանի մեր Դաշնակցական ընկերներուն կարող ենք ըսել թէ, ինքզինքնիդ մի միայն Դաշնակցական յորջորջելով չէք կարող որ եւ է օգտակարութիւն ունենալ. դրամ պէտք է, զէնք պէտք է, ոսկի դիզելով, մի միայն անձնականը մտածելով չէ որ կրնանք օգտակար ելալ գործին. զոհողութեան դիմենք որքան որ կարող ենք։

Իսկ Պարթեւեանի, Սուրէնեանի և Գուրպէթեանի պէս թրքացածներն ալ թող զգան որքան որ կուզեն։ Ասոնք վատաստութիւնը իր գագաթնակետին հասուցին, բայց մենք ալ չը պիտի դադրինք ասոնց նման դիմակաւորները դիմակաթափ ընելէ։

Մեհ-Տիո.

29 Ապրիլ 1904
Ռուսչուք

ՄՍՀԱԴՈՑԺ

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը ըզգալի կորուստ մը ունեցաւ յանձին Պ. Մովսէս Փափազեանի, որ ամսոյս 28ին կնքեց իր մահկանացուն սուգի մէջ թողլով ընկերները, բարեկամները և ամբողջ տեղւոյս հայ հասարակութիւնը։

Հանգուցեալը տեղւոյս հայրենասիրական Դաշնակցութեան Ենթակոմիտէի եռանդուն և գործունեայ անդամներէն էր և մասամբ անոր կըպարտինք ներկայիս ունեցած յաջողութիւնը. երբէք չէր խնայած իր աշխատութիւնը

«ԿՐԱԿՈՏ ՋՈՒՐԸ»

(Սիբիրի կեանքից)

(Թարգ. ռուսահունից)

Գ.

(Շար. նախուց թիւեն)

Հիմա էլ կրակոտ ջուրը մոռացութեան քաղի տակից դուրս էր կոչում երիտասարդութեան բոլոր բարեկամներին։ Նրանք ամենքն էլ կանգնած էին իր շուրջը ուրախ եւ ժպտուն խմբերով, ու երգում էին տխուր, մելամաղձոտ երգ։ Նրանք Էտէրգիլին վերյիշել էին տալիս անցած վիշտը... Այդ վշտի մէջ ուրախութիւն կար, որովհետեւ արդէն ապրված եւ սրտի արեան հետ էր խառնված...

Հիւղակի պատերը տեղահան եղան, հեռացան դէպի տունդրայի խորքերը, ամտղերը նայում էին երկնքից եւ ճեղքելով անցնում օճախի վերը գալարվող ծուխը... Մրչաք փայլուն են նրանք. այն ամտղերն են որոնք երբեմն, երբ ինքը իր փեսացուի հետ նստած էր, նայում էին լճ ն եւ եղեգնուտ ափերին... Բայց այժմ ամտղերն էլ կերպարանափոխվել են...

Պառաւը երգեց տխուր ու ձիգ եղանակով. իսկ Բօյագիրն էլ նստելով օճախի մօտ առանց բառերի ձայնակցեց պառաւի տխուր երգին։

Թէ ինչի մասին էր երգում պառաւը, Բօյագիրը չը գիտէր, բայց զգում էր որ նա մի լաւ բան է երգում. այնպիսի մի բան, որ միայն երազել կարելի է աստղազարդ գիշերներում. բայց երբէք իրականութեան մէջ չտեսնել։...

Առաւօտեան, երբ Բօյագիրը զարթնեց, Էտէրգիլը փսփսում էր օճախի կողքին։ Կրակի վրա արդէն եռում էր մսով լի կաթսան եւ հասարակ թէյով թէյամանը։ Բօյագիրի կինը գլուխը ծնկների մէջ դրած, նստել էր եւ երբեմն գլուխը վեր էր բարձրացնում, կարծես ականջ դնելու համար։

Բօյագիրը կնոջը ողջունելով սկսեց շտապով պատմել նրան իր տեսածի եւ գնածի մասին։ Պատմեց նաեւ որ Լանդուրը իր անունը նշանակեց կարմիր տեսարակի մէջ, ուր վաղուց արդէն տեղաւորված են իր բոլոր բարեկամները եւ առհասարակ բոլոր սամոյեդները։ Ա. ինքն էլ նման է բոլոր սամոյեդներին եւ իր ուղած ժամանակին կարող է պարտքով կրակոտ ջուր վերցնել։ Նա հպարտանում էր որ պարտքի տակ է ընկել, որ տէր է գտել... Հիմա աւելի ինքնավստահ էր երեւում. կարծես Լանդուրը նրա համար մի ժայռ լինէր, որին յենվել կարելի է համարձակորէն կեանքի փոթորիկների մէջ։

«Կեցցես Բօյագիր, դու հիմա տէր ունեցող մարդ դարձար, եւ կը կարենանք կրակոտ ջուր խմել». կարծես արտայայտելիս լինէր նրա ինքնավստահ եւ համարձակ կերպարանքը։

Երբ էլ պատմելու նիւթ չը մնաց, կնոջը ու երեխաներին, 6 եւ 7 տարեկան տղաներ, ցոյց տուեց իր գրնածները։ Կնոջը նուիրեց մի կարմիր թաշկինակ, իսկ տղաներին մի մի կարկանդակ։

—Բայց ամենից լաւը այս է...

Այս ասելով նա դուրս հանեց պարկից օղու սրուակը եւ դանակի կոթով սկսեց չրխկացնել։

—Ինչի՞ կնոջդ չես հրամցնում, ասեց Էտէրգիլը։

Բօյագիրը բացեց սրուակը եւ երեք գաւաթ լցրեց, երեքն էլ խմեցին, պառաւը չրթունքները լիզեց, իսկ երիտասարդ կինը քիթ ու բերանը ծռեց եւ թեւոցով բերանը սրբեց։ Իր գաւաթի մէջ մնացած օղին հերթով երկու տղաներին տալով, Բօյագիրը ասաց —բաւ է... պէտք է եւ բարեկամների մասին մտածել. երբ ադայ ծնվի պէտք է բարեկամներին հիւրասիրել, որպէս զի նա լաւ աշխատաւոր դառնայ։

Կէս օրին Բօյագիրի կիրը սկսեց թաւալել խրճիթի մէջ, ամեն տեղ մէջքը բռնելով։ Երեւում էր որ ժամանակը հասել է։

Բայց պառաւ Էտէրգիլը յանկարծ

ու ջանքը դէպի տառապող հայրենիքը։ Դաշնակցութիւնը հոգովը կը սիրէր, և կրսէր իր հայրենակիցներուն «հայ ժողովուրդը իր փրկութիւնը Դաշնակցութեան մէջ պէտք է փնտռէ, անկից դուրս փրկութիւն չի կայ։ ուստի ամէն հայ պարտաւոր է ուժտալ անոր»։

Ինքը բնաւ չի խնայեց ընել այն, ինչ որ կրնար ընել տառապող հայրենիքին օգնելու համար։ առաւոր համար ալ սիրելի է մեզ։

Յուղարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ տեղւոյս գաղութի մեծամասնութեան մասնակցութեամբ։ մօտ 200 հոգի կը հետեւէր մեր սիրելի ընկերոջ դագաղին։ երգու պակներ նուիրած էին, մին Հ. Յ. Դաշ. Ենթակոմիտէի կողմէ վրան դրուած էր Դաշնակցութեան զինանշանը ժապաւէնի վրայ բռնած, իսկ միւսը իր հայրենակիցներու կողմէ։ Վերջապէս Պուրկազաբնակ հայը գիտցաւ իր վերջին յարգանքը նուիրել մեր անմոռանալի ընկերոջ։

Մովսէսը ընիկ Մշոյ դաշտի խասգիւղացի էր, 38 տարեկան։ ունի ընտանիք և զաւակներ։

Հանգի՞ստ ոսկորներուդ պաշտելի ընկեր։ դու մեռար օտար հողի վրայ հեռո՞ւ սիրելիներէդ, բայց և այնպէս քու յիշատակդ միշտ վառ պիտի մնայ մեր սրտերուն մէջ։

Ճամբորդ

1904 Ապրիլ 30 Պուրկաս

ՀԱՅ ՁԱՐՁԻՆ

—()o()—

Ձիդ մի ամիս առաջ հոս եկաւ Հասան Շէֆքի գուրպէթ օղլուն, իր թերթին բաժնեգիները հաւաքելու պատրուակաւ։ քանի մի գիրքեր ալ ունէր թեւին տակը, զորս պտըտած ատենը այդ ժամանակակից հայ խմբագրին վար տիպարը չարշիի պէս ծախել կուզէր։ Քանի մը տեղեր իր թերթը չեն ստանար, կսէ անոնց. ապ ի՞նչ է։ «Հայաթերթ», «Շարժում» եւ այլն, ադոնք թերթ չեն որ կրստանաք. ամենէն ճշմարիտ գնահատելին «Իրաւունքն է։ Ասկէց վերջը իմ թերթս պիտի ստանաք։ մոռնալով որ թերթ չընդունող անձերը ոչ իրեն երեսը ոչ ալ թերթը կուզեն տեսնալ։

Մէկը Հ. Յ. Դաշնակցութեան Ուսկանապատի Կեդր. Կոմիտէին վիճակահանութեան տոմսերէն մին ցոյց տուեր է եւ բացատրութիւն խնդրեր, Շէֆքին ալ տոմսը քանի մը անգամ դարձնելէն վերջը պատասխաներ է պէտք է ժամանակին յայտարարէին, ադ ալ եղաւ։ Իսկ հիմայ որքերուն անուանովը կը զոնէայ։

Քանի կերթայ, սովը կը սաստկանայ վերակազմեալներու մէջ։ հիմայ ալ Դաշնակցութեան միսը կը ծամեն, սա բառերը հրհրելով—մենք միութիւն կուզենք, անոնք չեն միանար։ համերաշխութիւն կառաջարկենք, կրկին խոյս կուտան, հապա ի՞նչ ընենք։

Սադայէլներ, չէ՞ք գիտեր ձեր բրածը՝ մրոտել, խեղաթիւրել, դաւաճանել եւ յեղափոխութիւնը վարկաբեկել։ Ադ ձեզի բաժին կիյնայ։ Ձեր իրոցը յայտնի է։ ան որ դաշնակցութիւնը չէ ընդունած Վերակազմեալներու եւ միութիւնճիներու առաջարկը։

Այո, հայ յեղ. Դաշնակցութիւնը ձեզ նման սեւ հոգիներու հետ չի միանար, որ վերջը թմբուկով պարէ, ինչպէս որ դուք պարեցիք։ Եթէ ձեր Շէֆքիին «Իրաւունք»ը եւ Ամերիկայի ստրուկի «Զայն»ը սկիզբէն մինչեւ հիմայ պրպտենք, չը պիտի կարենանք գտնել մի թիւ, ուր Դաշնակցութիւնը վարկաբեկել ուզած չըլլաք։ ու ադ դուք ալ գիտէք։

«Իրաւունքի» վերջին թուին մէջ վահագն ստորագրութեամբ խմբագրականովը Դաշնակցութեան հետեւողները ապուշ կը կոչուին։ մոռնալով որ Շէֆքիին պէս պարխարու աւլուշները, մարդոց ապուշը որոշել չեն կրնար։

1904 ապրիլ 29

Քոնստանցա

Ցարգոյ խմբագրութիւն Շարժում Լրագրոյ

Կը խնդրենք հրատարակել մեր այս գրութիւնը ի գիտութիւն հայ հասարակութեան։

Մեր ծրագրի ամենաէական նպատակն էր կազմել դպրոցական գրադարան մը, որը սկսած ենք իրագործել։

Ստացած ենք Իսաֆֆիի, Ահարոնեանի, Շիրվանզատէի, Մերենցի, Դուրեանի, Պարոնեանի և այլ հայ հեղինակներու ընտրեալ գործերէն։

Գրադարանիս թէեւ առ այժմ այնչափ ճոխ չէ, բայց մեծ յուսով ենք որ յաւաջիկային պիտի կարողանանք կարելի եղածին չափ ճոխացնել։

Դպրոցի աշակերտներէն զատ որոշած ենք նաեւ գրքեր տալ բոլոր մեր այն դրսի բաժանորդներուն, որոնք մասնակցած են ընկերութեանս և մինչեւ հիմայ անհապաղ շարունակած են իրենց բաժնեգիները վճարել։

Մեր բոլոր դրսի բաժանորդները կարող են գրքեր ստանալ միայն կիրակի օրերը կէսօրէն առաջ մասը 10-11 Ազգային վարժարանի մէջ։

Վարչութիւն

Սիսակ. Սանուց Ընկերութեան

Ատենադպիր Ատենապետ

Ալ. Անդրէասեան Մ. Եանովիեան

3/16 Մայիս 1904

Սուս

(Կնիք)

ՌՈՒՍԻՈՅ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

—,—

Ռուսական պարտութիւնները թէ ժողովրդի, թէ զինուորներու վրայ յուսահատեցուցիչ արպաւորութիւն թողուցած են։ Վսճառականական դասը մտամոլոր և յուսախաբ վիճակի մէջ կը գտնուի։ Մանաւանդ դէպ ազդած է Քրօնսատատի դէպքերը։ այն ռուս սպան որ փորձեց Կրօնսատատի զինուորական մթերանոցը օդը հանել և ձերբակալուեցաւ, բանտին մէջ ինքզինքը կախեր է, այնպէս որ այլեւս յոյս չէ մնացեր անոր մեղսակիցները գտնալու։

Ցարը բոլորովին շւարած՝ մէկ տէրտէրներուն կը հրամայէ մաղթանքներ կատարել ամբողջ երկրին մէջ Աւուսիոյ սուրը կարուկ և ձեռքը բանուկ դարձնելու համար, մէկ ալ կարխարդուհու մը նախագուշակութիւններուն կը հետեւի։ Այժմ Ցարը իր քով երկար տեսակցութիւններու կընդունի մայրաքաղաքի տիկին Զէնուբի Գոլակիին։ Ան տիկինը կատուի վրայ, մեռաղի կտորի մը օգնութեամբ գծելով կը գուշակէ ռուսական բոլոր պարտութիւնները և անոր գուշակութիւնները մինչեւ օրս թէ ցամաքին և թէ ծովուն վրայ ճիշդ ելած են։ Այդ գծագրութիւններէն կերեւայ որ վերջ ի վերջոյ Ռուսերը պիտի յաղթեն։ անոր մէջ կերեւայ թէ ինչպէս վերջը ռուսական զօրքը Քօրէա կը մտնայ և ճաբոնցիները կը փախին։ Այս կնոջ համար կըսեն որ հինուուներուն գործիքն է։

* *

Որչափ ալ որ Զին կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչները կը յայտարարեն թէ Զինաստան չէզոք պիտի մնայ ներկայ պատերազմին միջոցին, այնու ամենայնիւ շատ լուրջ երեւոյթներ հակառակը կը փաստեն։

Օրինակ չին ժէնէրալ Մա-ի հրամանատարութեան տակ բաւական զօրք կեդրոնացուցեր է չինական մեծ պարսպին հիւսիսային կողմը։ ու հակառակ Ռուսիոյ կրկնուած պահանջներուն Մա ոչ միայն չի հեռանար, այլ եւ օգնութիւն, քաջալերանք կըստանայ Բէքինէն և ճաբոնցի կազմակերպիչներ։

Զինաստան կշտապի և իր նաւատորմիղը զօրեղացնել, որը շատ

ծակի չեկու։ Նա ամեն ինչ պատրաստել էր։ Մեծ հիւղակի մի կողմում, մորթերից շինված մի աւելի փոքրիկ հիւղակ էր յարմարցրել։ յատակը ծածկել էր ոստերով եւ մորթերով, վերջիններիս բուրդը վար, այդ հիւղակի մէջ օճախ չը կար, նա լուսաւորվում էր մի ճր գթաթով, որի մէջ լցված էր եղջերուի ճարպ։ Հիւղակում ցուրտ էր, նրա պատերը միայն քամուց էին պաշտպանում։

Այդ ծննդկանին յատկացված բընակարանն էր, որ չինել էր Նրա դայակ՝ Էտէրգիլը։ Ծննդկանը սամոեդների մէջ անմաքուր է համարվում, նա չէ կարող ծնել ընդհանուր բնակարանում, Նրա համար առանձին տուն են շինում։ Էտէրգիլը։ Մարիամին (Բոյագիրի կնոջ մկրտութեան անունը) տարաւ փոքրիկ հիւղակը։ այնտեղ թողեց միակ եւ ինքը սկսեց զբաղվել տնային գործերով։ Երբոր Մարիամ պարկած տեղից լսվում էին հեծեծանքի ձայներ, Էտէր գլուխ չտապում էր այնտեղ, իր հետ տանելով մայրի փափուկ, բարակ տաշեղներ, նոյնպէս փոկերով ամրացած եւ եղջերուի փափուկ մորթով պատած մայրիից շինված օրօրոցը եւ նոր շապիկ։

Մի ժամի չափ Էտէրգիլը մնաց ծննդկանի հիւղակում եւ ոչ ոք չը տեսաւ թէ նա այնտեղ ի՞նչ էր շինում։ Երեխաները ականջ էին դնում վարագոյրի ետեւից եկող ճիչերին եւ վախցած նայւածքներ փոխանակում իրարու հետ։ Բոյագիրը ծխում էր ու բոպէ առ բոպէ տեղից վեր էր ցատկում, մօտենում օճախին կախ-սայի ջուրը խառնում կամ թէ կրակին փայտ դնում։

Իսկ Էտէրգիլը նոյն միջոցին վերցնելով նորածին մանկան, մինչեւ լաւ չորցնելը սրբեց տաշեղներով, պորտը կապեց եւ դնելով օրօրոցի մէջ փաթաթեց քաթանով ու ծածկեց եղջերուի մորթով։

Յետոյ ծննդկանին մերկացնելով ամբողջովին նոր զգեստներ հագցրեց։ հին զգեստը, իբրեւ պիղծ կամ պէտք է այրվէր, կամ թէ դայեակի սեփականութիւն դառնար։

Շուտով ցրտից դողալով գուռնատ Մարիամը նորածինի օրօրոցը ձեռքին բռնած ներս մտաւ մեծ խրճիթը։ Ամուսինը բռնեց նրան եւ նստեցրեց օճախի մօտ։

Նա արդէն պատրաստ բռնած էր օղու գաւաթը, որը իսկոյն կնոջ տւեց խմելու։

Մարիամը տաքանալուց յետոյ պարկեց քնելու։ ամուսինը խնամքով ծածկեց կնոջը նապաստակի մորթուց շինված վերմակով եւ գլխի վերեւում տեղաւորեց օրօրոցը։

Էտէրգիլը ծննդկանի տունը յարդարելուց ու ամեն ինչ կարգաւորելուց յետոյ, ուրախ-ուրախ մտաւ մեծ խրճիթը եւ զարկեց Բոյագիրի ուսին։

—Կրակոտ ջուր լից, Աստուած քեզ համար լաւ աշխատաւոր ուղարկեց... հիմա պէտք է մկրտել, քանի որ տէրտէրը արեւելեան տունդրան չէ գնացել... գնանք Նրա մօտ։

—Առաջ բարեկամներիս կը կանչեմ կրակոտ ջուր խմելու, իսկ դու, լաւ խնամիր կնոջդ։

—Միթէ քո կինդ առաջինն է պառաւ Էտէրգիլի ձեռքում։ դէ, լիր։

Երկուսն էլ մի մի գաւաթ խմեցին։

—Լսիր, միջամտեց Բոյագիրը չը-շնչալով, կարծես մի բան մտաբերելով, Նրան էլ չը տա՞նք ծծելու կըրակոտ ջրից, ու աչքերով ցոյց տւեց օրօրոց։

Պառաւը ժպտաց, աչքը խորամանկաբար պստիկցնելով, կարծես ուզելով ասել «պառաւ Էտէրգիլը իր գործը լաւ գիտէ։

—Լաւ աշխատաւորը ծնած օրից սկսած պէտք է առնէ օղու համը, պնդել շարունակեց Բոյագիրը։

Նա ուզում էր Նորածնին հիւրասիրել իր ունեցածի ամենալաւովը։ Իսկ կրակոտ ջրից աւելի ի՞նչ լաւ բան կայ...

Բոյագիրը չտապով ճաշելուց յետոյ ելջերուներին լծեց ու գնաց բարեկամներին հրաւիրելու որ Լանդուրից, այդ բոլոր սամոեդների բարեբար ոգուց, ստացած օղին խմեն։

(Շարունակելի)

մօտ կը գտնուի պատերազմի վայրերուն։ Անոնց գիւանագէտները կը յայտարարեն թէ կառավարութիւնը չի կրնար երաշխաւորել որ ժողովուրդը խաղաղ պիտի մընայ։ Վերջերս շատ մը ռուսաստէր բարձր պաշտօնեաներ որձակուած են իրենց պաշտօններէն. վերջապէս Անգլիական թերթերուն գուշակութիւնները կան, որոնց համեմատ անկարելի է որ ճաբոնական յաղթութիւնները չարթնցնեն Չինաստանցիներու թմրած զինուորական զգացումները։ Այս ամենը կը թոյլատրեն կարծելու որ Չինաստան անպատճառ պատերազմի պիտի խառնուի այս յարմար վայրկեաններուն, երբ ռուսական զինուորի անյաղթելիութեան վարկը կոտրուած է, ու վրէժ լուծէ։

Ահա այս վախն ալ կայ Ռուսիոյ համար. վախ մը որ ներկայ վըտանգաւոր պայմաններուն մէջ շատ զօրեղ տպաւորութիւն կը գործէ ռուսական ամեն շրջանակներուն վրայ։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Ապրիլ 30ին Պոլսէն կը հեռագրեն թէ՝ Բ. Դուռը նոր հաղորդագրութիւն մը ղրկած է Լօնտոն և Բարիզ Անգլօ-ֆրանսական համաձայնութեան առթիւ Եգիպտոսի վերաբերմամբ, ոլով կը հաստատէ երկու պետութեանց վերջին յայտարարութիւնը և իր կողմէն ալ քանի մը դիտողութիւն ըրեր է։

—Մայիս 13 թուականաւ կ. Պոլսէն կը հեռագրուի «Ճայթիպ»։ «Հիւպատոսներուն տուած տեղեկութեանց նայելով Վանի մօտ 12 հոգիէ բաղկացեալ հայ յեղխումը մը զօրքէն զարնուած է։

Թիւրք իշխանութիւնները դժգոհ են Մուշի և Պիթլիսի եպիսկոպոսներէն, վերջիններս մերժած են ստորագրել վալիին այն տեղեկագիրը, որուն մէջ հայերը կամբաստանուին իրրեւ պատճառ տիրած անկարգութեանց։ Այս պատճառաւ եպիսկոպոսները իրենց հրաժարականը տուած են։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Մայիս 3ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ ռուսական նաւահանգիստ Դալնէյ (Թալէնվան) ճաբոնացոց ձեռքը անցնելը ըստոյգ է։

— Թոքիօէն կը հեռագրեն որ ճաբոնական նաւատորմիղը մայիս 2ին ռմբակոծեր է Վլատիվոստոքը։

Ճակատամարտը կարճատեւ բայց կատաղի եղած է։ Այդ ճակատամարտէն վերջը ճաբոնական նաւատորմիղը կենդէն վերադարձած է։

— Հռոմի թերթերը կը հաղորդեն որ Մանջուրիոյ ռուսական զօրքերուն մէջ կանաչ ժանտախտ կոչուած հիւանդութիւնը երեւան եկեր է։

— Բեթերսպուրկի մէջ կը պնդեն որ մաս մը չինացիներու ապստամբութիւնը ռուսներու և առհասարակ օտարներու դէմ անխուսափելի է։

—Ճաբոնացիք Դալնին աւերակ գրաւած են, որովհետեւ ռուսները գուրս ելլալնէն առաջ տինամիտով խորտակեր են թէ նաւահանգիստը և թէ քարափները։ Վնասը 30 միլիոն ֆրանքէն աւելի է։

— Ռուսական բոլոր զօրքերը Նիւչվանկ Լեաօեանկէ ղրկուածեն։ Ճաբոնացիներու Նիւչվանկին մօտեցած ատեն ռուսները իրենց թնդանօթակիր նաւ Սիվուչին օդը հաներ են։

—Բօրթ-Արթուրի մէջ գտնված պահեստի պաշարը լմննալու վրայ է և երկար չը պիտի կրնայ պաշարման դիմանալ։

— Բօրթ-Արթուրէն 3 ռուս ըսպաներ օդապարիկով Լեաօեանկ անցեր են Քուրօքաթկինի կարեւոր տեղեկութիւններ տալու համար։

— Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ ճաբոնացիները կրկին գրաւեր են Պալանսէն երկաթուղու կայարանը և ռուսաց յարաբերութիւնը բոլորովին խզուած է Բօրթ-Արթուրի հետ։

— Բօրթ-Արթուրը կրկին ռմբակոծուած է ճաբոնացիներու կողմէն, յարձակում եղած է նաեւ ցամաքի կողմէն։

ԱՆԳԼԻԱ

Լօնտոնի մէջ, անցեալ շաբաթի, 63 տարեկան հասակին մէջ, մեռեր է Աֆրիկան ուսումնասիրող երեւելի ճանապարհորդ Սթէնլի։

Սթէնլի որբանոցի մէջ սնուած որբ մըն էր, և այդ որբանոցէն ելլելով պատանի հասակին մէջ Ամերիկա կերթայ, ու այնտեղ հետզհետէ յառաջադիմելով վերջի վերջոյ Ամերիկեան թերթի մը կողմէն Կերթայ Աֆրիկա Լիվէնկսթոն երեւելի ճանապարհորդը փնտռելու, որ կորսուած էր Ամերիկայի մէջ։ Իր այդ ձեռնարկութեան մէջ կը յաջողի, հռչակ կըստանայ՝ այնուհետեւ քանի մը անգամ եւս կերթայ, կարեւոր ուսումնասիրութիւններ կը կատարէ. վերջը կուգայ Անգլիա կը հաստատուի։

— Լօնտոնէն ժուրնալ մը «Փընէյ»ի կը հեռագրեն թէ՝ յուլիս 26ին հոն տեղի պիտի ունենայ միջազգային համաժողով մը կազմուած Անգլիոյ, Իտալիոյ և Ֆրանսայի երեսփոխանական ժողովներուն անդամներէն. ժողովին նպատակն է բողոքել թուրքիոյ ներկայ ռէժիմին դէմ։

Ժողովին պիտի մասնակցին Բրէսանսէ, Տ'Էսթուրնել տը Բոնթան, կոմս տը Միւն, Տընի Կոշէն, Մարսէյլ Սամրա, Ժորէս, Ֆրանսայէն։

Բրոֆէսսոր Վիլարի, Բորթէնզի կոմս Մարինօ և Բորնարօ Մացինի Իտալիայէն։

—Կառավարութիւնը կը պատրաստուի նոր զօրք ղրկել Թիպէթ։

ՊՈՒԼԿԱՐ ՍՐՊԻԱԿԱՆ Բ ԲԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Ֆէրտինանտ իշխան նախօրօք կայացուած համաձայնութեան վրայ մայիս երկուսի առաւոտեան նախարարապետ Ռ. Բեթրովի, ներքին գործոց նախարար Դ. Բէթքով և իր պալատան մէկ քանի պաշտօնեաներուն հետ գնաց Նիշ Սրպիոյ Բէթր թագաւորին հետ տեսակցութիւն մը ունենալու։

Տեսակցութիւնը շատ սիրելիր եղած է. նախաճաշի ժամանակ երկու վեհապետները իրարու և իրենց ժողովուրդներուն կենացը բաժակներ պարպեր են։

Պուլկար և Սրպիա ժամուլը կը հաւաստեցնեն որ երկու դրացի պետութեանց մէջ լուրջ համաձայնութիւն մը կայացեր է իրենց յարաբերութիւններու և առհասարակ Պալքանեան թերակղզիի վերաբերեալ գործերու մասին։

Երկու պետութեանց պաշտօնեաներն ալ փոխադարձաբար պատանշաններ ընդուներ են։

Եւրոպական քանի մը թերթեր Սրպ-Պուլկարական այս համաձայնութիւնը Պալքանեան դաշնակցութեան նախաբանը կը համարեն. շուտով Բէթր թագաւորն ալ Սոֆիա պիտի գայ Ֆէրտինանտ իշխանին փոխայցելութիւն տալու։

ՑՈՒՆԱՍՏԱՆ

Հաւասի գործակալութիւնը կը հաղորդէ որ կառավարութիւնը ուզած է Զմիւռնիոյ դէպքերուն առթիւ նաւատորմիղը ղրկել Միտիլլին, բայց թագաւորը թոյլատրած չէ։ Ատոր համար ալ կառավարութիւնը դիմած է պետութեանց միջամտելու։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկէն կը հաղորդեն թէ նշանաւոր Ամֆիթէաթրով որ երեք տարի առաջ Սիբիր աքսորուած էր, վերադարձեր էր, և քանի մը յօդուածներ գրելով կանգնած թերթերու մէջ ուսանողները պաշտպանած է։ Այդ պատճառաւ ներքին գործոց նախարարը զայն Վոլոգտա աքսորած է, ուրկէ դուրս ելլելու իրաւունք չունի։

ՆԵՄԱԿԱՏԻՒՓ

Վառնա Իքսին. — Ձեր գրութիւնը «նատէժտա» խմբի մասին չը պիտի հրատարակուի։

Պատուարժան խմբագրութիւն
Շարժում Լրագրոյ
Աստ

Հաճեցէք ներկայ Ձեր չորեքշաբթի և շաբաթ աւուր թիւերու մէջ հրատարակել առ այս կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնները։

ՎԱՌՆԱՑԻ ԱՂԲԱՏԱԽՆԱՄԸ

Աղք. Ընկ. Ընդհանուր ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակի 9 Մայիս կէս օրէ վերջ ժամը 2-ին։

Ի գիտութիւն Պատուարժան անդամաց կուզանք յայտնել թէ, հակառակ մեր կրկնակի յայտարարութեանց անցեալ կիրակի անդամաց խիստ փոքրամասնութիւն մը ներկայ գտնուելուն ժողովը բանալ կարելի չեղաւ։

Մայիս 9-ին գումարուելիք Ընդ. ժողովը մեծամասնութիւն համարելով անկէ յետոյ ոևէ բողոք կամ դիտողութիւն անլսելի պիտի մնայ։

Դիւան Աղք. Ընկ. Ընդհ. ժողովոյ
Վ. Ատենադպիր Վ. Ատենապետ
Պ. Քիւրճեան Մ. Բարամաշեան
4 Մայիս 1904
Վառնա (ԿՆԻՓ)

ԹԱՏՐՈՆ

—)o(—

Սրահ Թրաքէզարիայի, Զար Սամուէլ փողոց Բ. ոստիկանատան եռեւը Սոֆիայի «Էնար» Երկսեռ Երգեցիկ Ընկերութիւնը պիտի ներկայացնէ յառաջիկայ շաբաթ գիշեր Մայիս 8-ին երեկոյան ժամը ճիշտ 8 1/2-ին։

ՄԱՏՆԻԶԸ

Հայ ներկայ կեանքէն առնուած
4 արար և 2 պատկեր
Գիներ
Բանաբէ 3 Ֆր. Ա. կարգ 2. Ֆր.
Բ. կարգ 1,50 Ֆր. Դ. կարգ 1 Ֆր.
Կալէրիա Նստարան 60 ւնթ. ռոքի
Վրայ 40 սանթիմ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼՕԶԱՆ, (ՇՈՒԻՑԵՐԻԱ)

—)(o)(—

Հայկազեան վարժարանը կընդունի 10էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ ազգային և եւրոպական լուրջ, առողջ և հիմնական կրթութիւն։

Հայկազեան վարժարանը ներկայ վեցամսեայէն սկսեալ հինգ աշակերտ պիտի ընդունի մեծ զեղչով։

Վարժարանիս տնօրէնը յանձն կառնէ նաեւ հայ օրիորդներ պատուաւոր ընտանիքներու մէջ զետեղելու ինչպէս և անոնց բարոյական և իմացական կրթութեան վրայ հսկելու գործը։

Դիմել հետեւեալ հասցէին՝
Մ. Նալպանտեան
Ինսթիթիւտոր Արմենիան
Լօզան, (Սուիս)

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна